



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲՎՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՇԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՒՐ ԱՐԹԻՒՐ ԱՂՎԲԵԿԵՎՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 2 Մայիսի առաւոտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մեջ ընդունեց այցելութիւնը Հայաստանի Ազգային ժողովի անդամ եւ Ազգ. Ավտանգութեան ու Պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ Արթիւր Աղաբեկեանի այցելութիւնը: Հայրենի հիւրը Լոս Անդեզս կը գտնուի Արցախեան Պայքարի 20ամեակին նուիրուած տօսակատարութեան բանախոսելու համար:

Պատգամաւորի կ'ընկերանար Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդր. Կոմիտէի անդամներէն Տիար Գարեգին Խանճեան: Ներկայ էին Գերպ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Յոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պատիկեան:

Առաջնորդ Սրբազնը հայրենի հիւրը ողջունեց, նշելով, որ «Ազգ. Առաջնորդարանը կը հանդիսանայ իւրաքանչիւր հայու տունը»: Հայրենի հիւրին հետ գրոյցը ընդգուեց Հայաստանի ու Արցախի իրադարձութիւնները, ինչպէս նաեւ մեր գաղութին իրավիճակին կապուած հարցեր: Ա. Աղաբեկեան փոխանցեց իր քաղած լաւ տպաւորութիւնները՝ Ազգային Վարժարաններ իր այցելութիւններեն ու նոր սերունդին մատուցուած հայեցի դաստիարակութենեն, ընդգծելով, որ «կարեւոր այս է թէ հայը իբրեւ հայ արթննայ ամեն առաւոտ, ուր որ ալ գտնուի ան»:

Այնուհետեւ, խօսակցութիւնը զարգացաւ Հայաստանի վերջին իրադարձութեանց ու անոր հետեւանքներուն վրայ. հիւր պատգամաւորը ընդգծեց իշխանութիւններուն ու ժողովուրդին գործակցութեան անհրաժեշտ հրամայականը: Ան այս առիթով նաեւ խօսեցաւ կարգ մը հայրենաշեն ծրագիրներու մասին:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազնը հայրենի պատգամաւորին յանձնեց յուշանուեր մը:

## **ARMENIAN PARLIAMENT MEMBER ARTUR AGHABEGIAN VISITS THE PRELACY**

On the morning of Friday, May 2<sup>nd</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy member of Armenia's Parliament and Chair of the Security and Defense Committee Artur Aghabegian, who was invited to Los Angeles to be the keynote speaker at the 20<sup>th</sup> anniversary grand celebration of the Artsakh Liberation Movement.

Participating in the meeting were ARF Central Committee representative Mr. Karo Khanjian, Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian and Executive Council treasurer Mr. Vahan Bezdkian.

The Prelate and guests discussed the current state of affairs in Armenia and Artsakh as well as issues relating to our community in general. Mr. Aghabegian imparted that during his visits to Prelacy schools he was impressed by the Armenian education the students were receiving, emphasizing that what is important is for an Armenian to rise each day as an Armenian no matter where he finds himself in this world.

The discussion then turned to the situation in Armenia, with Mr. Aghabegian noting that cooperation between the governing bodies and the people is crucial. He also spoke of the various efforts to secure aid for Armenia.

The visit concluded with the Prelate presenting the guest deputy with a memento.